**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ – Ծ 1032. Մ11007/20**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ «ԵՐԵՎԱՆԻ N1 ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «20» «փետրվար» 2020 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ս. Մաչյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Երևանի N1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության տնօրեն Վ. Զուրաբյանի, (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 566-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի 1032 «Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» ծրագրի 11007 «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված հունվար-փետրվար՝ մինչև 3,327,200 (Երեք միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունը՝ պարտավորվում է իրականացնել Կազմակերպության սոցիալական տան կացարաններում բնակվելու իրավունք ունեցող անձանց (այսուհետ՝ բնակիչ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կացարանի տրամադրման կազմակերպման, բնակիչների հետ պայմանագրերի կնքման, սոցիալական բնակարանային ֆոնդի պահպանման, շահագործման և սպասարկման ապահովման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց տեխնիկական միջոցների, լսողական սարքերի ու հաշմանդամի սայլակներ ձեռք բերելու համար հավաստագրերի տրամադրման գործընթացները՝ սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 1 և N 1.1 հավելվածներով նախատեսված Միջոցառումներին (այսուհետ՝ Միջոցառումներ) համապատասխան, N 2 հավելվածով սահմանված ֆինանսական ցուցանիշների, բարեգործական և այլ միջոցների շրջանակներում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

**2.1. Նախարարությունն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի բնականոն գործունեությանը.

2.1.2. սույն պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Միջոցառումների պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում իրականացվող Միջոցառումները, կամ դրա իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Միջոցառումների պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

**2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1. իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

**2.3. Նախարարությունը պարտավոր է՝**

2.3.1. սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացված Միջոցառումների մասին ներկայացված կատարողական հաշվետությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 3 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումները համապատասխանում են սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

**2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1. սույն պայմանագրով Նախարարության կողմից տրամադրված գումարների հաշվառումն իրականացնել՝ հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ստանդարտներին համապատասխան.

2.4.2. Միջոցառումներն իրականացման նպատակով ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ֆինանսական ցուցանիշներին համապատասխան.

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Նախարարությանը ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5 հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի.

2.4.5. Նախարարությանը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104 հրամանով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները.

2.4.6. Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարի նախարարի 2019 թվականի հունվարի 30-ի N 26-Ա հրամանով հաստատված ձևաչափին համապատասխան, Նախարարության հաստատմանը ներկայացնել 2020 թվականին սույն պայմանագրով, բարեգործական և այլ միջոցների հաշվին իրականացվող եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ այնուհետև եկամուտների և ծախսերի նախահաշվում յուրաքանչյուր փոփոխություն կատարելու դեպքում այն ներկայացնել Նախարարության հաստատմանը, ընդ որում ծախսային մասը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5 հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ.

2.4.7. 2020 թվականի հաստատված եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսված միջոցների շրջանակներում անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով.

2.4.8. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.9. Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում, Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

## 3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությանը միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսին մինչև դեկտեմբերի 20-ը՝ Նախարարություն է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի երեքական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 4 հավելվածի:

4.2. Կազմակերպությունը՝ հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն է ներկայացնում փաստացի ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 4 հավելվածի:

4.3. Նախարարությունը՝ հանձնման-ընդունման ակտը ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ներկայացնում է Կազմակերպությանը, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը.

4.4. Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունված է համարվում սույն պայմանագրի N 4 հավելվածով սահմանված հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրելու և կնքելու պահից:

4.5. Նախարարությունը դեկտեմբեր ամսվա 20-ից 31-ն ընկած ժամանակահատվածի համար կանխատեսվող ծախսերը ներառում է դեկտեմբեր ամսվա հաշվետվություններում և մինչև 2021 թվականի հունվարի 20-ը կանխատեսվող ծախսերի և փաստացի ծախսերի տարբերությունը /ավել ֆինանսավորված գումար/ վերադարձնում է ՀՀ պետական բյուջե:

## 5. Պայմանագրի գինը

5.1 Սույն պայմանագրի գինը հունվար-փետրվար ամիսների համար կազմում է 3,327,200 (Երեք միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ նաև բոլոր հարկերը, տուրքերը ու պարտադիր այլ վճարները:

5.1.1 Պայմանագրի տարեկան գինը կողմերի համաձայնությամբ կվերանայվի լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

5.2. Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի 8.3 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

5.3. Նախարարությունը՝ Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ իր գանձապետական հաշվից գումարը Կազմակերպության գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:
Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրին կից N 4 հավելվածով սահմանված «Հանձնման-ընդունման» երկկողմանի ստորագրված ակտի հիման վրա, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ֆինանսական միջոցների սահմաններում, բայց ոչ ավելի քան տվյալ ժամանակահատվածի (տարեսկզբից աճողական) համար նախատեսված գումարի չափից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացված Միջոցառումների դիմաց վճարվելիք գումարի չափը սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գումարի չափին գերազանցելու դեպքում, վճարումն իրականացվում այն եռամսյակում որում դրամական միջոցները նախատեսված են:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2020թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա (կհանդիսանան) սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը):

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.

8.5. Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N N 1, 1.1, 2, 3, 4, հավելվածները բաղկացած են 23 էջից և համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

| **Նախարարություն՝** | **Կազմակերպություն՝** |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ք. Երևան, Կառավարական տուն-3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011216497<br>ՀՎՀՀ 01506515<br><br>Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝<br><br>_____ Ս. Մաչյան<br>(ստորագրություն)<br>Կ. Տ. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ<br>Ք. Երևան, Հաղթանակ 2-րդ փողոց 45 տուն<br>« ՀՀ ՖՆ գործառնական վարչություն »<br>Հ/Հ 900018002148<br>ՀՎՀՀ 01804194<br><br>Կազմակերպության տնօրեն՝<br><br>_____ Վ. Զուրաբյան<br>(ստորագրություն)<br>Կ. Տ. |

N 1 հավելված
2020 թ. «20» «փետրվար»
կնքված N ԴՏՊ-Ծ1032.Մ11007/20 պայմանագրի

## Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

| Իրականացվելիք միջոցառման | | | | | |
|---|---|---|---|---|---|
| անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | վերջնաժամկետը | պահանջվող գումարը(դրամ) |
| «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի 10 բաժնի, 07 խմբի, 01 դասի, 1032 ծրագրի 11007 միջոցառում Սոցիալական բնակարանային ֆոնդի պասարկման ծառայությունների ծրամադրում» | «Երևանի N1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) հետ կնքված դրամաշնորհի պայմանագրի նպատակը ԿազմակերպությանՆ որպես սոցիալական բնակարանային ֆոնդ՝ անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի, շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ֆինանսավորման ապահովումն է:<br>Կազմակերպությունը սոցիալական տան | 1) կազմակերպում և իրականացնում է բնակվելու իրավունք ունեցող անձանց բնակեցումը հատկացված բնակելի տարածությունում.<br>2) բնակիչների հետ կնքում է կացարանի տրամադրման պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1069-Ն որոշմամբ սահմանված կարգով.<br>3) իրականացնում է բազմաբնակարան սոցիալական բնակարանային ֆոնդ հանդիսացող շենքերի | Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված են հետևյալ շենքերն ու շինությունները՝<br>1. ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/14 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 45.<br>2. Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Շիրազի փողոց 25 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 24.<br>3. Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Շիրազի փողոց 26 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 15. | 01.01.2020թ 31.12.2020թ. | Սույն պայմանագրով նախատեսած և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների շրջանակներում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կացարաններում բնակվելու իրավունք ունեցող անձանց (այսուհետ՝ բնակիչ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կացարանի տրամադրման կազմակերպման, բնակիչների հետ պայմանագրերի կնքման, սոցիալական բնակարանային ֆոնդի պահպանման, շահագործման և սպասարկման ապահովման գործընթացը իրականացնում է ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N 1009-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն, 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 1159-Ն որոշումների պահանջներին և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 | պահպանումը, տեխնիկական սպասարկումը.<br>4) իրականացնում է սոցիալական աջակցության ծրագրերով նախատեսված բնաիրային օգնության պահպանման և բաշխման աշխատանքների կազմակերպումը:<br>5) մասնակցում է սոցիալական բնակարանային ֆոնդ հանդիսացող բազմաբնակարան շենքերի և դրանց հարակից տարածքներին առնչվող հարցերի քննարկմանը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում.<br>6) բնակիչներին անհրաժեշտության դեպքում տրամադրում է տեղեկանքներ՝ շենքում բնակվելու և նրանց | 4. Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Շիրազի փողոց 27 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 15.<br>5. Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Շիրազի փողոց 33 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 15.<br>6. Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Շիրազի փողոց 34 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 20.<br>7. Լոռու մարզ, ք. Սպիտակ, Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փողոց 1-ին փակուղի տուն 2, 4, 6, Երիտասարդության փողոց տուն 1, 2, 57, 58, Երիտասարդության փողոց 4-րդ փակուղի տուն 6, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | թվականի դեկտեմբերի 13-ի N 153-Ա/1 հրամանի դրույթներին համապատասխան:<br>Սոցիալական բնակարանային ֆոնդի շահառուներ կարող են լինել բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն չունեցող, ինքնասպասարկման ապահովման ունակություն ունեցող, ժամանակավոր կացարանում կամ հասարակական նշանակության այլ օբյեկտներում բնակվող հետևյալ անձինք (խմբերը)՝<br>1) «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության | ընտանիքի կազմի մասին.<br>7) ապահովում է լիազորված անձանց մուտքը շենքի փակ բնակարաններ՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22.1-րդ հոդվածով սահմանված դեպքերում: | Երիտասարդության փողոց 3-րդ փակուղի տուն 1, ընդամենը 9 առանձնատուն.<br>8. Արարատի մարզ, ք. Արարատ, Շահումյան 69 շենք, բնակարան 7, ընդամենը 1.<br>Ընդամենը՝ սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցների թիվը 16 է, այդ թվում՝ 6 շենք՝ 134 բնակարանով, 9 առանձնատուն, մեկ առանձին բնակարան:<br>Կազմակերպության կողմից իրականացվող սոցիալական բնակարանային ֆոնդի կառավարման ողջ գործընթացը իրականացվում է Կազմակերպության ղեկավարի տեղակալի կողմից (1.0 հաստիքային միավոր), Կազմակերպության համակարգչային ցանցերի, սերվերների, տեսահսկման համակարգերի սպասարկումը՝ որոնք | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | օրենքով սահմանված կարգով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասվող անձինք.<br>2) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ ունեցող ընտանիքները, որոնց անապահովության միավորը բարձր է 0-ից՝ որպես սատարող ընտանիք.<br>3) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, անապահովության 0-ից բարձր միավոր ունեցող հետևյալ անձինք (ընտանիքները)՝<br>ա. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 3 | | հանդիսանում են նաև արտակարգ իրավիճակներում տվյալ տարածքում օգտագործվող խիստ անհրաժեշտ միջոցներ՝ իրականացվում է համակարգչային օպերատորի կողմից (1.0 հաստիքային միավոր), Թբիլիսյան խճուղի 3/14, ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի 9 և ՀՀ Արարատի մարզ, ք. Արարատի 1 բակարանի և շենքերի, շինությունների խնդիրների առաջացման դեպքում՝ դրանց լուծման աշխատանքներն իրականցվում է պարետի կողմից (1.0 հաստիքային միավոր), իսկ ՀՀ Շիրակի մարզի թվով 5 շենքերում, շինություններում խնդիրների առաջացման դեպքում՝ դրանց լուծման աշխատանքներն իրականցվում է պարետի կողմից (1.0 հաստիքային միավոր). Թբիլիսյան խճուղի 3/14 շենքի վարչական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հավելվածի 14-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված կարգով որպես «միայնակ չաշխատող կենսաթոշակառու» հաշվառված անձինք (ընտանիքներ), այդ թվում՝ նրա (նրանց) աշխատելու դեպքում,<br>բ. միածնող ընտանիք, եթե ամուսիններից մեկը մահացել է, կամ միայնակ անձի կողմից որդեգրվել է երեխա,<br>4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փախստական ճանաչված և ապաստան ստացած անձինք: | | տարածքների մաքրման աշխատանքներն իրականացվում են հավաքարարի կողմից (1.0 հաստիքային միավոր), Թբիլիսյան խճուղի 3/14 շենքի տարածքում բանվոր (1.0 հաստիքային միավոր) Թբիլիսյան խճուղի 3/14 շենքում պահակների կողմից իրականացվում է պահակային ծառայություն, կապված պահեստների ինչպես նաև արտակարգ իրավիճակներում որպես հատուկ նշանակության օբյեկտ (4 հատիքային միավոր): Այսպիսով, Կազմակերպությունում սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի տեխնիկական սպասարկումն իրականացվում է ընդամենը 10 հաստիքային միավորներով: Գնահատման համար 2020 թվականին սահմանված են հետևյալ որակական ցուցանիշները. | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 1. Կազմակերպությունը կացարանը տրամադրում է բնակչին՝ պայմանագրի ստորագրելուց հետո 7 օրվա ընթացքում:<br>2. Կազմակերպությունը սոցիալական տանը՝ բնակչի կողմից կացարանն ազատվելու օրվանից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է նախարարությանը:<br>3. Նախարարությունը բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող անձին (ընտանիքին) և Կազմակերպությանը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է կացարանի տրամադրման որոշման մասին: Բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող անձի (ընտանիքի) կողմից 30 օրվա ընթացքում կազմակերպություն չներկայանալու դեպքում գրավոր տեղյակ է պահում կազմակերպությանը նշելով | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պատճառը, ներկայանալու հնարավոր ժամկետը, որը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան ևս 30 օր: Այդ ժամկետում կազմակերպություն չներկայանալը դիտարկվում է որպես տրամադրվող կացարանից հրաժարում, որի մասին կազմակերպությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է նախարարությանը: | | |

| | |
|---|---|
| **Նախարարություն՝**<br>Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝<br>_____ Ս. Մաչյան<br>(ստորագրություն) Կ. Տ. | **Կազմակերպության տնօրեն՝**<br>_____ Վ .Զուրաբյան<br>(ստորագրություն) Կ. Տ. |

N 1.1 Հավելված
2020 թ. «20» «փետրվար ամսի» կնքված
N ԴՏՊ – Ծ1032.Մ11001/19-2 պայմանագրի

## Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

Աջակցող միջոց ձեռք բերելու համար պետական հավաստագրերը դրանց կարիքն ունեցող անձանց տրամադրում է «Երևանի N1 տուն-տերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն):

Կազմակերպությունը ծառայությունները տրամադրում է ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշման 1-ին, 7 թվականի սեպտեմբերի 22-ի N 1159-Ն որոշման 1-ին հավելվածներով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 կանի հունվարի 22-ի N 6-Ա/1 և 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N 153-Ա/1 հրամաններով սահմանված իր լիազորությունների անակներում:

Կազմակերպության կողմից իրականացվող վերը նշված գործընթացում ներգրավված է երեք աշխատակից՝ 3.0 հաստիքային միավորով:

| | Իրականացվելիք միջոցառման | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կ | **Անվանումը** | **Համառոտ բովանդակությունը** | **Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը** | **Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները** | **Վերջնաժամկետը** |
| | Աջակցող միջոցներ ձեռք բերելու համար պետական հավաստագրերի տրամադրում | Կազմակերպության հետ կնքվող սույն պայմանագրի նպատակը սոցիալական աջակցության ծրագրերով նախատեսված՝ աջակցող միջոցների | 1. Ստանում է հավաստագիր ստանալու համար դիմած քաղաքացիների դիմումները, ստուգում դիմումին կից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունվարի 22-ի N 6-Ա/1 | Կազմակերպությունը 2020 թվականին ապահովում է պետական բյուջեի միջոցների հաշվին սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում շահառուներին պետական հավաստագրերի տրամադրումը: | 29.02.2020թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | բաշխման ծառայությունների ապահովումն է: | հրամանի պահանջներին:<br>2. ձևավորում է հավաստագիրը պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգում կամ լրացնում թղթային տարբերակով և դրա էլեկտրոնային լուսապատճենը կցում տեղեկատվական համակարգին:<br>3. Պետական հավաստագրերի գները լրացնելիս ուղղորդվում է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 23-ի N 190-Ա/1 հրամանով:<br>4. Քաղաքացիներին պատշաճ տեղեկացնում է դիմումի ընթացքի մասին՝ հավաստագիր տրամադրելու (ներառելով նաև տեղեկատվություն տվյալ աջակցող միջոցը տրամադրող կազմակերպությունների մասին) կամ հավաստագրի տրամադրելը մերժելու մասին:<br>5. Պատասխանում է քաղաքացիների | Աշխատանքների գնահատման չափանիշ է նաև քաղաքացիների դիմումներին սահմանված ժամկետներում պատշաճ պատասխաններն ուղարկելը: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հեռախոսազանգերին՝ հավաստագրերի գործընթացին առնչվող հարցերի վերաբերյալ: Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն և 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշումներով սահմանված դեպքերում և կարգով աջակցող միջոցներ տրամադրվում են պետական հավաստագրերի հիման վրա՝ հետևյալ շահառուներին՝<br>1. հաշմանդամություն ունեցող անձանց,<br>2. ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված՝ ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքի անդամներին (այսուհետ նաև՝ սոցիալապես անապահով անձինք),<br>3. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին և նրանց հավասարեցված անձանց,<br>4. Հայրենական մեծ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պատերազմում զոհվածների այրիներին,<br>5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների (այդ թվում՝ պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների) ընտանիքի անդամներին,<br>6. երեխաներին՝ անկախ հաշմանդամություն ունենալու կամ սոցիալապես անապահով լինելու հանգամանքից,<br>7. ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքների անդամներին: | | |

Կազմակերպությունը ամսական պարբերությամբ նախարարություն է ներկայացնում հաշվետվություն N 1 հավելվածով սահմանված չափերով:

| | |
|---|---|
| **Նախարարություն՝**<br>Նախարարության գլխավոր քարտուղարի<br>պարտականությունները կատարող՝<br><br>_____ Ս. Մաչյան<br>(ստորագրություն)<br>Կ. Տ. | **Կազմակերպության տնօրեն՝**<br><br>_____ Վ. Հուրաբյան<br>(ստորագրություն)<br>Կ. Տ. |

Հավելված 1

**Ամսական ամփոփ հաշվետվություն**
**-------թ.-ից --------թ. աջակցող միջոցների պետական հավաստագրեր տրամադրելու վերաբերյալ**

| Հ/Հ | Աջակցող միջոցի պետական հավաստագրի անվանումը | Տրամադրված հավաստագրերի քանակ | Աջակցող միջոցը ստացած անձանց քանակ | Տարբերությունը |
|---|---|---|---|---|
| 1 | **Վերին վերջույթի պրոթեզ** | | | |
| 1.1 | Դաստակի կոսմետիկ պրոթեզ | | | |
| 1.2 | Նախաբազկի ձգողական պրոթեզ | | | |
| 1.3 | Բազկի ձգողական պրոթեզ | | | |
| 1.4 | Նախաբազկի կոսմետիկ պրոթեզ | | | |
| 1.5 | Բազկի կոսմետիկ պրոթեզ | | | |
| 1.6 | Բազկի միոպրոթեզ | | | |
| 1.7 | Նախաբազկի միոպրոթեզ | | | |
| 1.8 | Ուսի էկզարտիկ պրոթեզ | | | |
| 2 | **Ստորին վերջույթի պրոթեզ** | | | |
| 2.1 | Թաթի պրոթեզ՝ ըստ Լիս Ֆրանկի | | | |
| 2.2 | Թաթի պրոթեզ՝ ըստ Շոպարի | | | |
| 2.3 | Սրունքի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ | | | |
| 2.4 | Սրունքի էկզոսկելիտար ոչ մոդուլյար պրոթեզ | | | |
| 2.5 | Սրունքի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով | | | |
| 2.6 | Սրունքի էկզոսկելիտար պրոթեզ կաշվից | | | |
| 2.7 | Սրունքի էնդոսկելիտար պրոթեզ կաշվից ընդունիչով | | | |
| 2.8 | Սրունքի էկզոսկելիտար պրոթեզ մանժետով | | | |
| 2.9 | Սրունքի պրոթեզ ըստ Պիրոգովի և Սայմի | | | |
| 2.10 | Ծնկահոդի էկզարտիկ պրոթեզ | | | |
| 2.11 | Ազդրի էնդոսկելիտար պրոթեզ կաշվից ընդունիչով | | | |
| 2.12 | Ազդրի էնդոսկելիտար պրոթեզ կաշվից, շինայով | | | |
| 2.13 | Ազդրի էկզոսկելիտար պրոթեզ կաշվից | | | |
| 2.14 | Ազդրի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ | | | |
| 2.15 | Ազդրի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ լրացուցիչ (ISNI) ներդիրով | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2.16 | Ազդրի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով | | | |
| 2.17 | Կոնք-ազդրի էկզարտիկ պրոթեզ | | | |
| 2.18 | Սրունքի էկզոսկելիտար պրոթեզ նստատեղի հենարանով՝ կաշվից | | | |
| 2.19 | Ազդրի բուժամարզական պրոթեզ լամինացիայով | | | |
| 2.20 | Սրունքի բուժամարզական պրոթեզ լամինացիայով | | | |
| 3 | **Ակնագնդի (Աչքի) պրոթեզ** | | | |
| 4 | **Կրծքագեղձի էկզոպրոթեզ** | | | |
| 5 | **Օրթեզներ** | | | |
| 5.1 | Ճաճանչ-դաստակային օրթեզ առանց հոդի, պլաստիկից | | | |
| 5.2 | Արմնկային օրթեզ առանց հոդի, պլաստիկից | | | |
| 5.3 | Արմնկային օրթեզ հոդով, պլաստիկից | | | |
| 5.4 | Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, պլաստիկից(AFO) | | | |
| 5.5 | Սրունք թաթային օրթեզ առանց հոդի, լամինացիայով(AF) | | | |
| 5.6 | Ծնկան հոդի օրթեզ առանց հոդի պլաստիկից(KO) | | | |
| 5.7 | Ամբողջ ոտքի օրթեզ առանց հոդի պլաստիկից | | | |
| 5.8 | Սրունք-թաթային օրթեզ հոդով պլաստիկից(AFO) | | | |
| 5.9 | Սրունք-թաթային օրթեզ հոդով, լամինացիայով(AFO) | | | |
| 5.10 | Ծնկան հոդի օրթեզ հոդով, պլաստիկից (KO) | | | |
| 5.11 | Ծնկան հոդի օրթեզ հոդով, լամինացիայով (KO) | | | |
| 5.12 | Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, կաշվից | | | |
| 5.13 | Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, պլաստիկից | | | |
| 5.14 | Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, լամինացիայով | | | |
| 5.15 | Սրունքի օրթոպրոթեզ կաշվից | | | |
| 5.16 | Սրունքի օրթոպրոթեզ պլաստիկից | | | |
| 5.17 | Սրունքի օրթոպրոթեզ լամինացիայով | | | |
| 5.18 | Ազդրի օրթոպրոթեզ կաշվից | | | |
| 5.19 | Ազդրի օրթոպրոթեզ պլաստիկից | | | |
| 5.20 | Ազդրի օրթոպրոթեզ լամինացիայով | | | |
| 5.21 | Պարանոցի օրթեզ՝ սեղմիրան (CO) | | | |
| 5.22 | Պարանոցա-կրծքային օրթեզ՝ սեղմիրան (CTO) | | | |
| 5.23 | Պարանոցա-կրծքա-գոտկային օրթեզ՝ սեղմիրան (CTLO) | | | |
| 5.24 | Գլխի օրթեզ (helmet) | | | |
| 5.25 | Ծուռ թաթի օրթեզ ծալված | | | |
| 5.26 | Այովա բրես | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5.27 | Օրթեզ պատելայից ծանրություն կրող PTB | | | |
| 5.28 | Գիշերային կորսետ երփեղկանի գերշտկումով | | | |
| 5.29 | Կրծքա-գոտկա-սրբանային օրթեզ՝ սեղմիրան (TLSO) | | | |
| 5.30 | Գոտկա-սրբանային օրթեզ՝ սեղմիրան (LSO) | | | |
| 5.31 | Կրկնակի կաղապարով օրթեզ՝ սեղմիրան (TLSO) | | | |
| 5.32 | Ոտնաթաթի կամարները, կրունկի դիրքը և վալգուսային դեֆորմացիայի շտկող օրթեզ (UCBL) | | | |
| 5.33 | Օրթեզի կոշիկ | | | |
| 6 | **Սեղմիրաններ (կորսետ), ռեկլինատորներ** | | | |
| 6.1 | Սեղմիրան փափուկ | | | |
| 6.2 | Սեղմիրան կիսակոշտ | | | |
| 6.3 | Ռեկլինատոր | | | |
| 7 | **Աղեկապեր** | | | |
| 7.1 | Աճուկային աղեկապ | | | |
| 7.2 | Որովայնի աղեկապ | | | |
| 8 | **Օրթոպեդիկ կոշիկ** | | | |
| 9 | **Հենակներ** | | | |
| 9.1 | Թևատակի հենակ | | | |
| 9.2 | Արմնկային հենակ | | | |
| 10 | **Ձեռնափայտեր** | | | |
| 10.1 | Ձեռնափայտ սովորական | | | |
| 10.2 | «Սպիտակ ձեռնափայտ» տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար | | | |
| 11 | **Քայլակներ** | | | |
| 11.1 | Քայլակ սովորական | | | |
| 11.2 | Քայլակ /մանկական ուղեղային կաթվածով անձանց համար/ | | | |
| 12 | **Ծնկակալ** | | | |
| 13 | **Գուլպաներ** | | | |
| 13.1 | Բրդյա-բամբակյա գուլպաներ | | | |
| 13.2 | Սիլիկոնե գուլպաներ | | | |
| 14 | **Փոքր տրամաչափի սայլակ** | | | |
| 15 | **Լսողական սարքերի անհատական ներդիրներ** | | | |
| 16 | **Ձայնաստեղծ սարքեր և պրոթեզներ** | | | |
| 16.1 | Ձայնաստեղծ սարքեր | | | |
| 16.2 | Ձայնաստեղծ պրոթեզ | | | |
| 17 | **Անվասայլակներ** | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 17.1 | Անվասայլակ սովորական | | | |
| 17.2 | Անվասայլակ /մանկական ուղեղային կաթված, գերգիրության և արտահայտված սկոլիոզ ունեցող անձանց համար/ | | | |
| 18 | **Լսողական սարքեր** | | | |
| 18.1 | Լսողական սարք մինչև 29 տարեկան անձանց համար | | | |
| 18.2 | Լսողական սարք 30-ից բարձր տարիքի անձանց համար | | | |
| 19 | **Պրոթեզի կոշիկ** | | | |

| | |
|---|---|
| **Նախարարություն՝**<br>Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝<br>_____ Ս. Մաչյան<br>(ստորագրություն)<br>Կ. Տ. | **Կազմակերպության տնօրեն՝**<br>_____ Վ. Զուրաբյան<br>(ստորագրություն)<br>Կ. Տ. |

Ձև 1

| Հ/հ | Անվանում | Չափի միավոր | Ընդհանուր քանակ |
|---|---|---|---|
| 1 | Դաստակի կոսմետիկ պրոթեզ | Հատ | 1 |
| 2 | Նախաբազկի ձգողական պրոթեզ | Հատ | 1 |
| 3 | Բազկի ձգողական պրոթեզ | Հատ | 1 |
| 4 | Նախաբազկի կոսմետիկ պրոթեզ | Հատ | 2 |
| 5 | Բազկի կոսմետիկ պրոթեզ | Հատ | 2 |
| 6 | Բազկի միոպրոթեզ | Հատ | 1 |
| 7 | Նախաբազկի միոպրոթեզ | Հատ | 4 |
| 8 | Ուսի էկզարտիկ պրոթեզ | Հատ | 1 |
| 9 | Թաթի պրոթեզ՝ ըստ Լիս Ֆրանկի | Հատ | 4 |
| 10 | Թաթի պրոթեզ՝ ըստ Շոպարի | Հատ | 3 |
| 11 | Սրունքի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ | Հատ | 10 |
| 12 | Սրունքի էկզոսկելիտար ոչ մոդուլյար պրոթեզ | Հատ | 8 |
| 13 | Սրունքի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով | Հատ | 4 |
| 14 | Սրունքի էկզոսկելիտար պրոթեզ կաշվից | Հատ | 4 |
| 15 | Սրունքի էնդոսկելիտար պրոթեզ կաշվից ընդունիչով | Հատ | 1 |
| 16 | Սրունքի էկզոսկելիտար պրոթեզ մանժետով | Հատ | 1 |
| 17 | Սրունքի պրոթեզ ըստ Պիրոգովի և Սայմի | Հատ | 1 |
| 18 | Ծնկահոդի էկզարտիկ պրոթեզ | Հատ | 3 |
| 19 | Ազդրի էնդոսկելիտար պրոթեզ կաշվից ընդունիչով | Հատ | 1 |
| 20 | Ազդրի էնդոսկելիտար պրոթեզ կաշվից, շինայով | Հատ | 1 |
| 21 | Ազդրի էկզոսկելիտար պրոթեզ կաշվից | Հատ | 2 |
| 22 | Ազդրի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ | Հատ | 7 |
| 23 | Ազդրի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ լրացուցիչ (ISNI) ներդիրով | Հատ | 1 |
| 24 | Ազդրի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ սիլիկոնե լայներով | Հատ | 4 |
| 25 | Կոնք-ազդրի էկզարտիկ պրոթեզ | Հատ | 4 |
| 26 | Սրունքի էկզոսկելիտար պրոթեզ նստատեղի հենարանով՝ կաշվից | Հատ | 1 |
| 27 | Ազդրի բուժամարզական պրոթեզ լամինացիայով | Հատ | 8 |
| 28 | Սրունքի բուժամարզական պրոթեզ լամինացիայով | Հատ | 11 |
| 29 | Ակնագնդի (աչքի) պրոթեզներ | Հատ | 28 |
| 30 | Կրծքագեղձի էկզոպրոթեզներ | Հատ | 55 |
| 31 | Ճաճանչ-դաստակային օրթեզ առանց հոդի, պլաստիկից | Հատ | 2 |
| 32 | Արմնկային օրթեզ առանց հոդի, պլաստիկից | Հատ | 1 |
| 33 | Արմնկային օրթեզ հոդով, պլաստիկից | Հատ | 1 |
| 34 | Սրունք-թաթային օրթեզ առանց հոդի, պլաստիկից(AFO) | Հատ | 40 |
| 35 | Սրունք թաթային օրթեզ առանց հոդի, լամինացիայով(AF) | Հատ | 1 |
| 36 | Ծնկան հոդի օրթեզ առանց հոդի պլաստիկից(KO) | Հատ | 1 |
| 37 | Ամբողջ ոտքի օրթեզ առանց հոդի պլաստիկից | Հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 38 | Սրունք-թաթային օրթեզ հոդով պլաստիկից(AFO) | Հատ | 1 |
| 39 | Սրունք-թաթային օրթեզ հոդով, լամինացիայով(AFO) | Հատ | 1 |
| 40 | Ծնկան հոդի օրթեզ հոդով, պլաստիկից (KO) | Հատ | 1 |
| 41 | Ծնկան հոդի օրթեզ հոդով, լամինացիայով (KO) | Հատ | 1 |
| 42 | Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, կաշվից | Հատ | 1 |
| 43 | Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, պլաստիկից | Հատ | 1 |
| 44 | Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, լամինացիայով | Հատ | 1 |
| 45 | Սրունքի օրթոպրոթեզ կաշվից | Հատ | 1 |
| 46 | Սրունքի օրթոպրոթեզ պլաստիկից | Հատ | 1 |
| 47 | Սրունքի օրթոպրոթեզ լամինացիայով | Հատ | 1 |
| 48 | Ազդրի օրթոպրոթեզ կաշվից | Հատ | 1 |
| 49 | Ազդրի օրթոպրոթեզ պլաստիկից | Հատ | 1 |
| 50 | Ազդրի օրթոպրոթեզ լամինացիայով | Հատ | 2 |
| 51 | Պարանոցի օրթեզ՝ սեղմիրան (CO) | Հատ | 1 |
| 52 | Պարանոցա-կրծքային օրթեզ՝ սեղմիրան (CTO) | Հատ | 1 |
| 53 | Պարանոցա-կրծքա-գոտկային օրթեզ՝ սեղմիրան (CTLO) | Հատ | 1 |
| 54 | Գլխի օրթեզ (helmet) | Հատ | 1 |
| 55 | Ծուռ թաթի օրթեզ ծալված | Հատ | 1 |
| 56 | Այովա բրես | Հատ | 1 |
| 57 | Օրթեզ պատելայից ծանրություն կրող PTB | Հատ | 1 |
| 58 | Գիշերային կորսետ երփեղկանի գերշտկումով | Հատ | 1 |
| 59 | Կրծքա-գոտկա-սրբանային օրթեզ՝ սեղմիրան (TLSO) | Հատ | 2 |
| 60 | Գոտկա-սրբանային օրթեզ՝ սեղմիրան (LSO) | Հատ | 1 |
| 61 | Կրկնակի կաղապարով օրթեզ՝ սեղմիրան (TLSO) | Հատ | 1 |
| 62 | Ոտնաթաթի կամարները, կրունկի դիրքը և վալգուսային դեֆորմացիայի շտկող օրթեզ (UCBL) | Հատ | 1 |
| 63 | Օրթեզի կոշիկ | Հատ | 60 |
| 64 | Սեղմիրան փափուկ | Հատ | 8 |
| 65 | Սեղմիրան կիսակոշտ | Հատ | 9 |
| 66 | Ռեկլինատոր | Հատ | 1 |
| 67 | Աճուկային աղեկապ | Հատ | 1 |
| 68 | Որովայնի աղեկապ | Հատ | 4 |
| 69 | Պրոթեզի կոշիկներ (զույգ) | Զույգ | x |
| 70 | Օրթպեդիկ կոշիկներ | Զույգ | 250 |
| 71 | Թևատակի հենակ | Հատ | 50 |
| 72 | Արմնկային հենակ | Հատ | 150 |
| 73 | Ձեռնափայտ սովորական | Հատ | 120 |
| 74 | «Սպիտակ ձեռնափայտ» տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար | Հատ | 4 |
| 75 | Քայլակ սովորական | Հատ | 50 |
| 76 | Մանկական քայլակ /մանկական ուղեղային կաթվածով երեխաների համար/ | Հատ | 10 |
| 77 | Ծնկակալեր | Հատ | 20 |
| 78 | [illegible] | [illegible] | 50 |

| | | | |
|---|---|---|---|
| 79 | Սիլիկոնե գուլպաներ | Հատ | 50 |
| 80 | Փոքր տրամաչափի սայլակներ | Հատ | 0 |
| 81 | Լսողական սարքերի ներդիրներ | Հատ | 0 |
| 82 | Ձայնաստեղծ սարքերի և պրոթեզների ձեռքբերում | Հատ | 20 |
| 83 | Անվասայլակ | Հատ | 120 |
| 84 | Անվասայլակ / մանկական ուղեղային կաթված, գերգիրության և արտահայտված սկոլիոզ ունեցող անձանց համար/ | Հատ | 20 |
| 85 | «Լսողական սարք (30 տարեկան եվ ավելի բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող, տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց տրամադրվող) | Հատ | 250 |
| 86 | Լսողական սարք (12-29 տարեկան անձանց տրամադրվող) | Հատ | 20 |
| 87 | **Լոգարանի աթոռ** | Հատ | 0 |

| | |
|---|---|
| **Նախարարություն՝**<br>Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝<br>_____ Ս. Մաչյան<br>(ստորագրություն)<br>Կ. Տ. | **Կազմակերպության տնօրեն՝**<br>_____ Վ. Զուրաբյան<br>(ստորագրություն)<br>Կ. Տ. |

N2 Հավելված
2020թ.«20» դեկտեմբեր կնքված
N ԴՏՊ-Ե1032.Մ11007/20 պայմանագրի

## ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

**ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի 1032 «Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» ծրագրի 11007 «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման և հաշմանդամություն ունեցող անձանց տեխնիկական միջոցների, լսողական սարքերի ու հաշմանդամի սայլակներ ձեռք բերելու համար հավաստագրերի տրամադրման ծառայությունների իրականացման նպատակով «Երևանի N1 տուն-հնտեռնատ» ՊՈԱԿ-ին ռոմամաշնորհի տրամադրման համար սահմանվող**

| | |
|---|---|
| *1. Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցների թիվը, այդ թվում* | 16 - միավոր |
| *1.1 շենքերի թիվը, այդ թվում* | 6 - շենք |
| *1.1.1բնակարանների թիվը* | 134 - բնակարան |
| *1.2 առանձնատների թիվը* | 9 - առանձնատուն |
| *1.3 առանձին բնակարանների թիվը* | 1 - առանձին բնակարան |
| *1.4 Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցներում բնակվող անձանց թիվ. մարդ* | 320 մարդ |
| *2. Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների համար գրվող հաստատառեռի թիվը* | - 1516 հատ |
| *3. Հաստիքային միավորների թիվը* | - 13.0 հաստիքային միավոր |
| *4. Հաստատուն ծախսեր.* | - 3,327.2 հազ.դրամ |
| *5. Տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափը* | - 3,327.2 հազ.դրամ |

այդ թվում՝

***Հաստատուն ծախսերի գծով***

***ա/ հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի տրամադրման ժամանակացույց.***

| Ամիսները | Ընդամենը | Ամիսները | Ընդամենը |
|---|---|---|---|
| հունվար | 1,663.6 | հուլիս | 11,645.2 |
| փետրվար | 1,663.6 | օգոստոս | 3,327.2 |
| մարտ | 3,327.2 | սեպտեմբեր | 3,327.2 |
| ապրիլ | 3,327.2 | հոկտեմբեր | 3,327.2 |
| մայիս | 3,327.2 | նոյեմբեր | 3,327.2 |
| հունիս | 3,327.2 | դեկտեմբեր | 3,327.2 |
| **Ընդամենը** | | | ***3,327.2*** |

***բ/ հաստատուն ծախսերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական ծածկագրի.***

| Տնտեսագիտական դասակարգման կատեգորիաների անվանումը | Ծածկագիրը | Տարեկան չափաքանակը (հազ.դրամ) |
|---|---|---|
| *Աշխատանքի վարձատրություն* | 410000 | 2,335.5 |
| *Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում* | 420000 | 552.6 |
| *Այլ ծախսեր* | 480000 | 439.1 |
| *Ընդամենը* | | ***3,327.20*** |

**Նախարարություն՝**

Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

_____ Ս. Մայլյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կազմակերպություն՝**

Տնօրեն՝

_____ Վ. Զուրաբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

N 3 Հավելված
2020 թ. «10» «02» կնքված
N ԴՏՊ – Ծ1032.Մ11007/20

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

...ղական պետական բյուջեի 1032 «Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» ծրագրի 11007 «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում
«Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին _____ ամսում փոփոխուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա և հաստատուն ծախսերի գծով փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

| Ծախսային հոդվածներ | | | | | Հաշվետու ժամանակահատվածում | | | Տարեսկզբից աճողական | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տնտեսագիտական դասակարգման ծածկագիրը | | | | | | | | | | | |
| ...ական դասակարգման ...ոշիվների անվանումը | Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը | ծածկագիրը | Հաստատված նախահաշվի գումարը | Ճշտված նախահաշվի գումարը | Նախատեսված գումարը | Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը | Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր | Նախատեսված գումարը | Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը | Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր | բարեգործական կազմակերպության անվանումը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| ԾԱԽՍԵՐ՝ | | x | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| ...ծախս | | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| ...ի աշխատավարձեր և ...եր | | 4111000 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Մշտական աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 411110 | | | | | | | | | |
| | Ժամանակավոր աշխատողներին վճարվող աշխատավարձ | 411120 | | | | | | | | | |
| | Դատարանի որոշումների հիման վրա վճարվող աշխատավարձ | 411130 | | | | | | | | | |
| ...ումներ, դրամական ...եր և հատուկ վճարներ | | 4112000 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Պարգևատրումներ | 411210 | | | | | | | | | |
| | Դրամական խրախուսումներ | 411220 | | | | | | | | | |
| ...առայություններ | | 421200 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Էներգետիկ ծառայություններ | 421210 | | | | | | | | | |
| | Ջեռուցման ծառայություններ | 421220 | | | | | | | | | |
| ...այություններ | | 421300 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ | 421310 | | | | | | | | | |
| | Այլ կոմունալ ծառայություններ | 421390 | | | | | | | | | |
| ...ություններ | | 421400 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | կապի աբոնենտային ծառայություններ | 421410 | | | | | | | | | |
| | փոստային խոսակցությունների վճար | | | | | | | | | | |
| | միջքաղաքային խոսակցության գումար | | | | | | | | | | |
| | ինտերնետային կապ | | | | | | | | | | |
| | Փոստային և սուրհանդակային վճարներ | 421420 | | | | | | | | | |
| ...ական ծախսեր | | 421500 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Գույքի ապահովագրություն | 421510 | | | | | | | | | |
| ...ծավորումների ...ություն | | 421600 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Գույքի վարձակալություն | 421610 | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Սարքավորումների վարձակալություն | 421620 | | | | | | | | | |
| **ծուղումներ** | | 422100 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Ներքին գործուղումների օրապահիկ | 422110 | | | | | | | | | |
| | Ներքին գործուղումների գծով հյուրանոցային ծախսեր | 422120 | | | | | | | | | |
| | Ներքին գործուղումների փրանսպորտային ծախսեր (օդանավ, ավտոբուս, գնացք և այլն) | 422130 | | | | | | | | | |
| **բնույթի այլ ուններ** | | 423900 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 423910 | | | | | | | | | |
| **ական ծառայություններ** | | 424100 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Մասնագիտական ծառայություններ | 424110 | | | | | | | | | |
| **կառույցների ընթացիկ պահպանում** | | 425100 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 425110 | | | | | | | | | |
| **ի և սարքավորումների որոգում և պահպանում** | | 425200 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 425210 | | | | | | | | | |
| | Գրասենյակային սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 425220 | | | | | | | | | |
| | Այլ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 425290 | | | | | | | | | |
| **ային նյութեր և հագուստ** | | 426100 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Գրասենյակային պիտույքներ | 426110 | | | | | | | | | |
| | Հագուստ և համազգեստ | 426120 | | | | | | | | | |
| **ային նյութեր** | | 426400 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Վառելիքի ծախսեր | 426410 | | | | | | | | | |
| | Այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար | 426490 | | | | | | | | | |
| **ական և լաբորատոր** | | 426600 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Բժշկական քննությունների նյութեր | 426610 | | | | | | | | | |
| **և հանրային սննդի** | | 426700 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Կենցաղային նյութեր (Մաքրիչ և հիգիենիկ նյութեր) | 426710 | | | | | | | | | |
| | Հանրային սննդի նյութեր (Ճխախոտ) | 426720 | | | | | | | | | |
| | Կենցաղային այլ նյութեր (Տնտեսական նյութեր ապրանքներ) | 426730 | | | | | | | | | |
| **վճարներ** | | 482300 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Այլ պարտադիր վճարներ | 482350 | | | | | | | | | |
| | | 486100 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | |
| | Այլ ծախսեր | 486110 | | | | | | | | | |

Տնօրեն՝ _____ (ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն)

Կ.Տ

**Կազմակերպություն՝**

Կազմակերպության տնօրեն՝ Կ.Զուրաբյան

(ստորագրություն)

Կ.Տ

**ություն՝**

ության գլխավոր քարտուղարի

նությունները կատարող՝ Ս.Մայյան

(ստորագրություն)

N 4 Հավելված
2020թ. «20» «սեպտեմբեր» կնքված
N ԴՏՊ – Ծ1032.Մ11007/20 պայմանագրի

| Նախարարություն՝ | Կազմակերպություն՝ |
|---|---|
| հասցե՝ | հասցե՝ |
| հ/հ | հ/հ |
| հվհհ | հվհհ |

# ԱԿՏ
## Հանձնման-ընդունման

« »« » 2020թ.
Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝
Նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Ա. Մաչյանի, և Կազմակերպությունն՝ ի դեմս Կազմակերպության տնօրեն Վ. Զուրաբյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման « »« » 2020թ. N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Միջոցառումների իրականացումը համապատասխանում է պայմանագրով նախատեսված Միջոցառումներին և տրամադրման ժամանակացույցին՝ կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը « »« » 2020թ–ից « »« » 2020թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները.

| *Համառոտ նկարագիրը* | *Քանակը* | *Նվազագույն շահավետ գինը՝մեկ միավորի հաշվարկով (դրամ)* | *Մեկ միավորի գինը (դրամ)* | *Մեկ միավորի համար տրամադրվող դրամաշնորհի չափը (դրամ)* | *Վճարման ենթակա գումարը (հազ.դրամ)* | *Վճարման վերջնաժամկետը ամիս, ամսաթիվը* |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3-4 | 6=2x.5 | 7 |
| Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման միջոցառումներ ի իրականացում | x | x | x | x | x | x |
| **Ընդամենը** | x | x | x | x | | x |

ընդունեց՝ /ստորագրություն/
ազգանուն
Կ.Տ

հանձնեց՝ /ստորագրություն/

| **Նախարարություն՝** | **Կազմակերպության տնօրեն՝** |
|---|---|
| Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ _____ Ս.Մաչյան (ստորագրություն) | _____ Վ.Զուրաբյան (ստորագրություն) |